



ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Պատմության և իրավագիտության ֆակուլտետը 2017 թվականին կազմակերպում է Հայաստանի Հանրապետության ավագ և միջնակարգ դպրոցների 11-12-րդ դասարանների աշակերտների օլիմպիադա՝ Հայոց պատմություն առարկայից: Յուրաքանչյուր դպրոցից կարող է մասնակցել 5-ական աշակերտ 11-րդ և 12-րդ դասարաններից: Հաղթողները կստանան հավաստագրեր, մրցանակներ և մինչև 50% վարձի գեղջ ՀՊՄՀ Պատմության և իրավագիտության ֆակուլտետում սովորելու դեպքում:

Օլիմպիադան անցկացվելու է ՀՊՄՀ Պատմության և իրավագիտության ֆակուլտետում:

Օլիմպիադային մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև **ս.թ. հոկտեմբերի 6-ը** լրացնել մասնակցության հայտը և այն ուղարկել history_olimpiada@yahoo.com էլեկտրոնային հասցեով:

Օլիմպիադայի հետ կապված մանրամասներ և լրացուցիչ տեղեկություններ կտեղադրվեն www.aspu.am կայքում:

Սույն հայտարարությանը կցվում են օլիմպիադայի անցկացման պայմանները և մասնակցության հայտաձևը:

Հավելյալ հարցերով կարելի է դիմել Խ.Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Պատմության և իրավագիտության ֆակուլտետ.

հեռ. 010 59-70-91, 077-88-37-94

Էլ.փոստ. history_olimpiada@yahoo.com

Կայքէջ. www.aspu.am



Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր

Հայոց պատմություն առարկայից օլիմպիադայի անցկացման

Նպատակները.

- նպաստել Հայոց պատմություն առարկայի հանդեպ երիտասարդության հետաքրքրության բարձրացմանը,
- հայտնաբերել տաղանդավոր երիտասարդների,
- աջակցել նախապատրաստվելու ընդունելության քննություններին:

Կազմակերպիչը.

Օլիմպիադայի նախաձեռնողն ու կազմակերպիչը հանդիսանում է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Պատմության և իրավագիտության ֆակուլտետը:

Հենակետային հաստատությունը.

Միջոցառումը իրականացվելու է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Պատմության և իրավագիտության ֆակուլտետում:

Օլիմպիադայի ոլորտը.

- Հայոց պատմություն

Մասնակիցները.

Օլիմպիադայի մասնակիցներ կարող են դառնալ 11-12-րդ դասարանների այն աշակերտները, որոնց կներկայացնի տվյալ դպրոցը:

Մրցույթները կազմակերպվելու են երկու խմբերի դասարանների աշակերտների համար.

- 11-րդ դասարան` 1-ին խումբ
- 12-րդ դասարան` 2-րդ խումբ

Մասնակցության գրանցման պայմանները.

Օլիմպիադային մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել մասնակցության հայտը և այն ուղարկել history_olimpiada@yahoo.com էլեկտրոնային հասցեին: Գրանցման ենթակա են ՀՀ ավագ դպրոցների աշակերտները:

Օլիմպիադայի կազմակերպման և անցկացման կարգը.

Օլիմպիադան անցկացվում է մեկ մրցութային փուլով: Այն կազմակերպվելու և անցկացնելու պատասխանատվությունը կրում է օլիմպիադայի կազմակերպիչը:

Օլիմպիադան կազմակերպվելու է ՀՊՄՀ-ում ս.թ. հոկտեմբերի 19-ին և 20-ին, ժամը 14:00-ին:

Մրցույթին նախատեսվում է «Հայոց պատմություն» առարկայի ընդունելության քննության ձևաչափով պատրաստված թեստային առաջադրանք: 11-րդ և 12-րդ դասարանների աշակերտները բաժանվելու են առանձին խմբերի:

Արդյունքների ամփոփում և պարզևատրում.

Օլիմպիադայի մրցութային փուլում ամենաբարձր միավորներ հավաքած մասնակիցները կպարգևատրվեն դիպլոմներով, նվերներով, կատանան գեղյի իրավունք ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետ ընդունվելու դեպքում՝ առաջին մրցանակային տեղի համար 50, երկրորդի՝ 40, երրորդի՝ 30, 4-10-րդ տեղերը զբաղեցնողները՝ 10 տոկոս: Ձեռչը գործելու է ուսումնառության առաջին տարվա համար:

Օլիմպիադայի ժամանակացույցը.

Մասնակցության հայտերի ներկայացում՝
Մրցույթի անցկացման օրեր՝
Երևանի դպրոցներ
Մարզերի դպրոցներ
Մրցույթի արդյունքների հրապարակում՝
Մրցանակների հանձնման արարողություն՝

մինչև հոկտեմբերի 6

| | |
|------------|----|
| հոկտեմբերի | 19 |
| հոկտեմբերի | 20 |
| հոկտեմբերի | 25 |
| նոյեմբերի | 1 |

Օլիմպիադայի հետ կապված մանրամասներ և լրացուցիչ տեղեկություններ կտեղադրվեն www.aspu.am կայքում:

Լրացուցիչ հարցերի և պարզաբանումների համար կարելի է դիմել ՀՊՄՀ Պատմության և իրավագիտության ֆակուլտետ՝ history_olimpiada@yahoo.com էլեկտրոնային հասցեով կամ 010 59-70-91, 077-88-37-94 հեռախոսահամարներով:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱ-2017

~~ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՑ~~

Օլիմպիադային մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել մասնակցության հայտը
և այն ուղարկել history_olimpiada@yahoo.com էլեկտրոնային փոստի հասցեին:
Շրագրին դիմելու վերջնաժամկետը 2017 թ. հոկտեմբերի 6-ը:

1. Դպրոցի տվյալները.

Դպրոցի անվանումը. _____

2. Աշակերտի ազգանունը, անունը, հայրանունը _____

3. Կապի տվյալներ. _____ // _____ //
հեռախոսահամարներ

Էլ. հասցե. _____

4. Մասնակցության մասին տեղեկությունները.

Ո՞ր տարիքայի խմբում է նախատեսվում աշակերտի մասնակցությունը.

11-րդ դաս.

12-րդ դաս.

5. Տեղեկանք դպրոցից՝ աշակերտի լուսանկարով